Մենք կարող ենք օգնել

Երեխաների օգնության տեղական գործակալությունն անվճար ծառայություններ է տրամադրում ծնողներին և խնամակալներին, նրանց օգնելու համար կատարել իրենց պարտականություններն իրենց երեխաների նկատմամբ:

Մենք հետևյալ ծառայություններն ենք տրամադրում.

- գտնել ծնողին.
- հայրություն հաստատել.
- հաստատել, վերանայել կամ կիրարկել երեխայի ապրուստադրամի վերաբերյալ դատարանի որոշումը.
- հաստատել, վերանայել կամ կիրարկել առողջության ապահովագրություն տրամադրելու վերաբերյալ դատարանի որոշումը:

Կալիֆոռնիայի երեխաների օգնության ծառայությունների դեպարտամենտը իրավաբանական ծառայություններ չի տրամադրում ծնողներին կամ խնամակալներին:

Առնոլդ Շվարցենեգեր, Կալիֆոռնիա նահանգի նահանգապետ

Քիմբըրլի Բելշե, Կալիֆոռնիայի առողջապահության և սոցիալական ծառայությունների գործակալության քարտուղար

Դեյվիդ Մաքսվել-Ջոլլի՝, Երեխաների օգնության ծառայությունների դեպարտամենտի տնօրեն

1-866-249-0773 (անվճար)
www.childsup.ca.gov

PUB 245 (9/08)

Օգնություն Կալիֆոռնիայի երեխաներին

Երեխաների օգնության ծառայությունների Ձեր ուղեցույցը

Երեխաների օգնության ծառայությունների դեպարտամենտ

Ծնողին գտնելը

Եթե Դուք չգիտեք, թե չխնամող ծնողը որտեղ է գտնվում, երեխաների օգնության տեղական գործակալությունը կփորձի գտնել նրան և հաստատել երեխայի հայրությունը և/կամ հաստատել, փոփոխել կամ կիրարկել երեխայի ապրուստադրամի վերաբերյալ դատարանի որոշումը:

Հայրության հաստատումը

Երեխաների օգնության տեղական դեպարտամենտը կարող է օգնել Ձեզ հաստատել հայրությունը՝ Հայրության հնարավորության ծրագրի հայտարարագրի միջոցով կամ դատարանի որոշմամբ: Հայտարարագիրն իրենից ներկայացնում է հարցաթերթիկ, որը լրացվում է և պետք է ստորագրվի երկու ծնողի կողմից էլ, որպեսզի առանց դատարանի հաստատվի երեխայի հայրությունը: Եթե երեխայի հայրությունը հարցականի տակ է առնված, երեխաների օգնության տեղական դեպարտամենտը կարող է օգնել ստուգում անցկացնելու հարցում:

Ապրուստադրամի վերաբերյալ դատարանի որոշման հաստատումը

Հայրության հաստատումից հետո մենք կարող ենք օգնել Ձեզ յուրաքանչյուր ծնողի եկամուտի, այցելությունների և այլ կարգի տեղեկությունների վրա հիմնված՝ երեխայի ապրուստադրամի վերաբերյալ դատարանի որոշում ստանալու հարցում: Դատարանի որոշումների մեծ մասը կպարունակի նաև աշխատավարձից ապրուստադրամի պահելու հանձնարարություն, ուստի երեխայի ապրուստադրամը կպահվի չխնամող ծնողի աշխատավարձից:

Որոշ դեպքերում մենք կարող ենք օգնել Ձեզ երեխայի ապրուստադրամի վերաբերյալ դատարանի որոշումը փոփոխելու հարցում, որը կոչվում է «վերանայում»:

Առողջության ապահովագրության համար դիմելը՝ հիմնված յուրաքանչյուր գործի փաստերի վրա:

Ձեր երեխաները առողջության ապահովագրություն ստանալու իրավունք ունեն: Մենք հոգ կտանենք, որ Ձեր երեխաներն ստանան իրենց անհրաժեշտ առողջության ապահովագրությունը, եթե այն կարելի է ձեռք բերել անվճար կամ մատչելի գներով:

Համագործակցությունն այլ նահանգների հետ

Երեխայի ապրուստադրամի վերաբերյալ դատարանի որոշումները կարող են ընդունվել և կիրարկվել, անգամ եթե երեխայի մյուս ծնողը բնակվում է մեկ այլ նահանգում:

Ապրուստադրամի վերաբերյալ դատարանի որոշման կիրարկումը

Երեխաների օգնության տեղական գործակալությունը երեխաների ապրուստադրամի գումարները գանձելու մի քանի ձև ունի, որոնց թվում են՝

- աշխատավարձից կատարվող պահումը.
- գանձումները՝
  - նահանգային կամ դաշնային եկամտահարկից.
  - գործազրկության նպաստից.
  - աշխատողների փոխհատուցման նպաստից.
  - անաշխատունակության նահանգային նպաստից.
  - վիճակախաղի շահումներից.
- բանկի գանձումները (բանկի հաշվից կատարվող գանձումները).
- արտոնագրերի չեղարկումը.
- գանձումները սեփականությունից.
- անձնագիր տալու մերժումը: Կիրարկման այդ գործողությունների մի մասը պահանջվում է օրենքով: Մյուսները կօգտագործվեն՝ կախված յուրաքանչյուր գործի առանձնահատկություններից:

Ուղեգրերը

Եթե Ձեզ օգնություն է հարկավոր հետևյալ ոլորտներից որևէ մեկում, մենք Ձեզ համապատասխան անձանց այցելելու ուղեգրեր կտանք.

- երեխային այցելելու կամ խնամակալության հետ կապված հարցերով.
- ընտանեկան վայրագության հարցերով.
- դատարանի որոշումները սահմանափակելու հարցերով.
- երեխայի նկատմամբ դաժան վերաբերմունքի հարցերով:

Փոփոխություն է կատարվում երեխայի ապրուստադրամի գանձման և տնօրինման կարգում

Այժմ երեխայի ապրուստադրամի հավաքումը և բաշխումը կտնօրինվի մեկ վայրում՝ Նահանգային վճարման բաժանմունքում (SDU): SDU-ն ծնողներին ավելի մեծ թվով տարբերակներ կառաջարկի երեխաների ապրուստադրամը ստանալու և վճարելու հարցում: Ծնողներին տեղյակ կպահվի, երբ իրենց շրջանի երեխաների օգնության գործակալությունը գործերը հանձնի SDU-ին:

Երեխաների օգնության տեղական գործակալությունները կշարունակեն ուղղակիորեն սպասարկել հաճախորդներին և տեղեկություններ տրամադրել վճարման վերաբերյալ: SDU-ի մասին լրացուցիչ տեղեկությունների համար զանգահարեք երեխաների օգնության Ձեր տեղական գործակալությունը կամ այցելեք DCSS-ի համացանցային կայքը՝ *www.childsup.ca.gov* հասցեով: